ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թ. N 287-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» N 15-Ն հրամանի հավելվածի 9-րդ կետի, Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 12-ի N 262-Ա որոշման և ՀՀ Վայոց ձորի մարզպետի ի՝ ս/թ. դեկտեմբերի 3-ի N 01/08.2/7356-2025 գրության (մտից N 1853, 03.12.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Հերթական ատեստավորման նպատակով հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Էդիկի Թադևոսյանի և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Հենրիկի Ղազարյանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 12-ին անցկացվող ատեստավորման հանձնաժողովի հետևյալ կազմը՝

նախագահ՝ Գևորգյան Մանան Աղվանի - Ջերմուկ համայնքի ղեկավար

անդամներ՝ Հովհաննիսյան Վարդան Վիկտորի - Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերով վարչության պետ

Ավետիսյան Հասմիկ Սամվելի–Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերով վարչության գլխավոր մասնագետ

Կոստանյան Արամ Աշոտի- Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

Մնացականյան Արկադի Ալբերտի - Ջերմուկ համայնքի ավագանու անդամ

Սարգսյան Լուսիկ Ժորայի - Ջերմուկ համայնքի ավագանու անդամ

Համբարձումյան Մխիթար Սամվելի - Ջերմուկ համայնքի ավագանու անդամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թ. N 288-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 276-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ–28112025-10-0222 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի նոյեմբերի 20-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,00556 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, հասցե տրամադրելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 276-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման 1-ին կետում «հասարակական» բառը փոխարինել «բնակելի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թ. N 289-Ա

ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՐԳԻՍ ՍԻՄՈՆԻ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ՝ ՀՈՂԱՄԱՍԻՆ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան և հաշվի առնելով Վայք քաղաքի բնակիչ Սարգիս Սիմոնի Ավետյանի դիմումը (մտից՝ N 1874, 09.12.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Վայք քաղաքի բնակիչ Սարգիս Սիմոնի Ավետյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 2167697) Ջերմուկ քաղաքի Բարեկամության կամրջից դեպի Ձախափնյակ թաղամաս տանող ճանապարհի՝ Երևանյան խճուղու, աջակողմյան հատվածում գտնվող անշարժ գույքին՝ բնակավայրերի նշանակության հողամասին, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք.Ջերմուկ, Երևանյան խճուղի N 8:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թ. N 290-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00673 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 2-րդ փողոցի գտնվող 0,00673 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20258ZJ5TB:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 2-րդ N 8/5:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թ. N 291-Ա

ՄԵՐՈՒԺԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ՊԱՐԳԵՎ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ, ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆԻ, ՄԽԻԹԱՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԵՅ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 114-րդ հոդվածի, 275-283-րդ, 219.1-րդ և 305-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 58-60-րդ հոդվածների, հիմք ընդունելով «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ–ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մուշեղ Աղաջանյանի՝ ս/թ նոյեմբերի 11-ի զեկուցագիրը (մտից N 1726) և Ջերմուկ համայնքի ղեկավարի՝ ս/թ նոյեմբերի 14-ի N 268-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթի շրջանակում Ջերմուկի համայնքապետարանի վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 8-ի N 3 արձանագրությունը և հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանի զեկուցագիրը (մտից N 1879)՝ ***որոշում եմ՝***

1. Համայնքի տարածքում՝ արգելված վայրում անասուններ պահելու (արածեցնելու) համար Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչներ Մերուժան Վոլոդիայի Խաչատրյանի,Դավիթ Ժորայի Առաքելյանի, Պարգև Սենիկի Առաքելյանի, Գալուստ Ալեքսանի Գալստյանին, Մխիթար Հրանտի Հովսեփյանի և Անդրեյ Յակովի Հակոբյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 114-րդ հոդվածի հատկանիշներով նշանակել վարչական տուգանք՝ 10 000–ական (տաս հազարական) դրամի չափով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված քաղաքացիները պարտավոր են սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Ջերմուկի համայնքապետարանի 900365031187 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Ջերմուկի համայնքապետարանի վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովին:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետում նշված քաղաքացիներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2025 թ. N 292-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ–10092025-10-0029 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 24-ի «Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 16-րդ փողոցի վրա գտնվող բնակելի տան և օժանդակ շինությունների, ինչպես նաև հողաբաժնի չափից ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու մասին» N 64-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա/ որոշման 1-ին կետում «0,2534» թիվը փոխարինել «0,25246» թվով, իսկ «2024HKV8DT» ծածկագիրը՝ «2025AQCSQL» ծածկագրով,

բ/ որոշման 2-րդ և 5-րդ կետերում «334,7» թիվը փոխարինել «324,6» թվով,

գ/ որոշման 4-րդ կետում «376,6» թիվը փոխարինել «374,8» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2025 թ. N 293-Ա

ԱՐՍԵՆ ՏԱՐԻԵԼԻ ԳԱՌՆԻԿՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասով, հաշվի առնելով Ա. Տ. Գառնիկյանի դիմումը (մտից N 1869, 09.12.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ս/թ դեկտեմբերի 16-ից Արսեն Տարիելի Գառնիկյանին նշանակել Ջերմուկ համայնքի ղեկավարի օգնական: Վարձատրությունը՝ ըստ համայնքի ավագանու կողմից 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 79-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2025 թ. N 294-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 5-րդ գլխի և 8-րդ գլխի 64-րդ կետի պահանջները և հաշվի առնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ ս/թ դեկտեմբերի 12-ի N 01/06.2/7555-2025 գրությունը (մտից N 1892, 15.12.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող միմյանց կից Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7 և Շահումյան փողոցի N 7/3 հասցեներում գտնվող անշարժ գույքերը՝ հողամասերը, միավորել որպես մեկ գույքային միավոր և տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շահումյան փողոց N 7:

2. Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/3 հասցեն համարել չեղյալ:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2025 թ. N 295-Ա

ՀԱԿՈԲ ՀԵՆՐԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀՈՂԱՄԱՍԸ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Արզնի համայնքի բնակիչ Հակոբ Հենրիկի Հակոբյանի դիմումը (մտից՝ N 1890, 12.12.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոցի վրա գտնվող 10-002-0017-0024 կադաստրային ծածկագրով հողամասին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Բարեկամության փողոց 3/1, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Բարեկամության փողոց N 3/2:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2025 թ. N 296-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02341 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի գտնվող 0,02341 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025N7UHBZ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շահումյան փողոց N 22/9:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թ. N 297-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 290-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 11-ի ««Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,00673 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, հասցե տրամադրելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 290-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

ա/ որոշման վերնագրում «ՃԱՆԱՉԵԼՈՒ» բառից հետո ավելացնել «, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ,» կետադրական նշանը և բառերը,

բ/ որոշման 1-ին կետում «հասարակական» բառը փոխարինել «բնակելի» բառով,

գ/ ավելացնել նոր՝ 2.1 կետ հետևյալ բովանդակությամբ՝ «2.1. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման հողամասի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թ. N 298-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու գտնվող 0,1 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025P8WEBP:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 80:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2025 թ. դեկտեմբերի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թ. N 299-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 17.12.2025 թ. N 01/11.2/7619-2025 գրությունը՝ ***որոշում եմ***՝

1. 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ, հունվարի 1-ից մինչև 19-ը ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր կարգի տնտեսություններում անասունների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծել համայնքային հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գևորգյան - համայնքի ղեկավարի խորհրդական
հանձնաժողովի քարտուղար՝ Վաղինակ Մանուկյան - աշխատակազմի գլխավոր մասնագետ
անդամներ՝ Արտակ Բագրատյան -Կեչուտ գյուղի վարչական ղեկավար
Սևակ Մկրտչյան- Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար
Մանուկ Մանուկյան - Կեչուտ գյուղի անասնաբույժ
Այվազ Բարսեղյան - Գնդեվազ գյուղի անասնաբույժ
Տիգրան Ղուկասյան-աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
Մեսրոպ Հարությունյան- աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

2.Հանձնաժողովին՝ անասնագլխաքանակի հաշվառումը և արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2025 թ. N 300-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,11679 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքում գտնվող 0,11679 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ այլ, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025D4GQVU:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 23
Ջերմուկ